# ԵՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կայքի այցելուներ, օգտատերեր.

Բարի գալուստ Եվրոպական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կայք:

Հուսով ենք, որ բացելով մեր էլեկտրոնային կայքէջը՝դուք կգտնեք կարևոր և նոր տեղեկություններ ու գաղափարներ: Թերթելով էջերը՝ դուք կարող եք ծանոթանալ մեր կրթական ծրագրերին, պրոֆեսորադասախոսական կազմին, նվաճումներին և մեր ընթացիկ գործունեությանը: Դուք հնարավորություն կունենաք վիրտուալ շրջագայություն կատարելու մեր ֆակուլտետում և ամբիոններում, դասասենյակներում և ուսումնական լաբորատորիայում:

Եթե դուք արդեն մեր թիմում եք՝ որպես ուսանող կամ պրոֆեսորադասախոսական կազմի անդամ, հուսով ենք՝ կարող եք օգտագործել այս կայքէջը՝ որպես և ուղեցույց, և որպես գործիք, ձեր ուսումը և աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Եթե դուք փնտրում եք նոր գաղափարներ, ապա մեր կայքէջը կդառնա ձեր լավագույն ուղեկիցը՝ ծանոթանալու, «հանդիպելու» մեր դասախոսական կազմի և աշխատակիցների հետ, ովքեր պատրաստ են ձեզ ուղղորդելու դեպի մասնագիտական նվաճումներ:

Եթե ունեք մտահոգացումներ մեր կողմից մատուցվող ծառայություններն ավելի նպատակային դարձնելու կամ կրթական նոր հնարավորությունների վերաբերյալ, հուսով ենք՝ այստեղ կգտնեք բոլոր պայմաններն ու հնարավորությունները՝ ձեր գաղափարները կյանքի կոչելու համար:

Կայքի գործարկումը իր գործին գիտակ թիմի հետևողական աշխատանքի արդյունքն է, ինչի համար հատուկ շնորհակալություն ԵՀ գիտամեթոդական խորհրդի նախագահ, ՀՀ ԲՈԿ-ի Ը.00.06 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության 060 մասնագիտական խորհրդի նախագահ, տնտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Վահանյանին, ֆակուլտետի մագիստրանտ Անի Վարդումյանին:

Դուք այցելում եք կայքի առաջին հարթակ, երկրորդում նախատեսվում է ստեղծել ֆակուլտետի էլեկտրոնային գրադարան՝ որտեղ դուք կծանոթանաք մեր դասախոսների ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի, գիտական հոդվածների հետ, երրորդում՝ կմասնակցեք նոր ուսումնական, տեխնիկական, հեռավար ուսուցում կազմակերպելու և իրականացնելու կիրառման գործընթացներին, ինչպես Երևանում,այնպես էլ համալսարանի մի շարք մասնաճյուղերում՝ մի շարք կրթական ծրագրեր ուսանելու նպատակով:

Կայքում տեղ կհատկացվի լավագույն ուսանողների և երիտասարդ հետազոտողների գիտական աշխատանքների՝ թեզերի նյութերը և տեղեկություններ իրենց նվաճումների մասին, ելույթների, մամուլում հոդվածների մասին և այլն:

Սիրելի այցելո՛ւ, կայքի հետագա բարելավման և զարգացման համար ակնկալում ենք Ձեր աջակցությունը՝ առաջարկությունների և դիտողությունների տեսքով:

**Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան՝**

**Նարինե Կիրակոսյան**

---